ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«08» ապրիլ 2025 թ. N 38-Ա/1

ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի N 630-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Որդեգրել ցանկացող անձանց համար նախատեսված նախապատրաստական դասընթացի առկա կազմակերպման և անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Որդեգրել ցանկացող անձանց համար նախատեսված նախապատրաստական դասընթացի ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում՝ ապահովել

դասընթացի կազմակերպման և անցկացման ժամանակացույցի և ծրագրի բովանդակության վերաբերյալ տեղեկատվության տեղադրումը նախարարության պաշտոնական կայքէջում:

3. Նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում՝

1) սույն հրամանը տրամադրել ՀՀ մարզպետարաններին, Երևանի քաղաքապետարանին և «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ պաշտոնական կայքէջերում տեղադրելու նպատակով,

2) վերապատրաստման ենթակա երեխա որդեգրել ցանկացող անձանց ցուցակները տրամադրել «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

4. «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Վ. Կարապետյանին՝

1) դասընթացները կազմակերպել առաջնորդվելով ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի թիվ 630-Ն որոշմամբ,

2) դասընթացն ավարտվելուց հետո մեկօրյա ժամկետում ներկայացնել դասընթացն ավարտած, որակավորված մասնակիցների ցանկը՝ դրանում ներառելով մասնակցի անունը, ազգանունը և անձնագրային տվյալները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

4/8/2025

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ